Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 21-ի N 243 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման աշխատանքների հետ կապված հարաբերությունները:

2. Օգտակար հանածոների հանքավայրի կամ դրա առանձին տեղամասի (այսուհետ՝ հանքավայր) երկրաբանատնտեսագիտական (արդյունաբերական) գնահատումը (այսուհետ՝ գնահատում) կոնկրետ հանքավայրի արդյունաբերական նշանակության որոշման և դրա սահմաններում պարփակված օգտակար հանածոների պաշարների հաշվարկման համար անհրաժեշտ կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմանն ուղղված դաշտային և (կամ) աշխատանոցային աշխատանքների համալիր է:

3. Հանքավայրի գնահատումը կատարվում է ընդերքօգտագործողի կողմից դրա շահագործման առավել արդյունավետ եղանակների, տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների ընտրության, բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման, կապիտալ ներդրումների, շահագործական ծախսերի, եկամուտների, շահույթի և այլ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսման միջոցով: Նշված խնդիրները լուծվում են հանքավայրի վերաբերյալ գնահատման պահին կուտակված ամբողջ երկրաբանական տեղեկության և հանրապետությունում սոցիալ-տնտեսական արդի պայմանների, շուկայի ընթացիկ վիճակի, գիտության ու տեխնիկայի նվաճումների հաշվառմամբ:

4. Հանքավայրի գնահատումն իրականացվում է ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության (այսուհետ՝ ուսումնասիրություն) և շահագործման համար տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

5. Հանքավայրի գնահատումն ուսումնասիրության արդյունքներով եզրափակում է դրա մանրազնին հետախուզման փուլը, և կատարվում է ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

6. Հանքավայրի գնահատումն ընդերքօգտագործողի ցանկությամբ, անարդյունավետ ծախսերի ռիսկը նվազեցնելու նպատակով, կարող է իրականացվել նաև դրա որոնողա-գնահատման և (կամ) նախնական հետախուզման փուլերում: Այդ աշխատանքները նույնպես կատարվում են տվյալ հանքավայրի ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերք-օգտագործման իրավունքի սահմաններում:

7. Շահագործվող հանքավայրի գնահատումն իրականացվում է ընդերք-օգտագործողի կողմից դրա արդյունաբերական գնահատականը և կոնդիցիաների պարամետրերը՝ լրահետախուզմամբ և շահագործական հետախուզմամբ համալրված ու ճշգրտված երկրաբանական տեղեկությանը, ինչպես նաև հանրապետության սոցիալ-տնտեսական, բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման և շուկայի արդի պայմաններին, գիտության ու տեխնիկայի ներկայիս մակարդակին համա-պատասխանեցնելու նպատակով (այսուհետ՝ վերագնահատում):

8. Լրահետախուզման և շահագործական հետախուզական աշխատանքները շարունակական են և մշտապես ուղեկցում են հանքավայրի շահագործման գործընթացը: Դրանք պետք է նախատեսվեն հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում և իրականացվեն օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամա-դրված ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

9. Շահագործվող հանքավայրի վերագնահատման արդյունքները ենթակա են պետական ընդերքաբանական փորձաքննության:

10. Շահագործվող հանքավայրում հանքային հումքի կոնդիցիաները և պաշարները ենթակա են վերագնահատման ոչ ուշ, քան յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ